

ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օրվա առթիվ

Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպությունը 1972 թվականին մարտի 1-ը սահմանել է Քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օր: Այս տոնական օրվա կապակցությամբ ի սրտե շնորհավորում եմ քաղպաշտպանության համակարգի բոլոր աշխատակիցներին՝ մաղթելով անվտանգ ծառայություն և նորանոր ձեռքբերումներ՝ իրենց պատասխանատու աշխատանքում:

Հարգելի գործընկերներ, բարձր գնահատելով ձեր մասնագիտական հմտությունները և հասարակության պաշտպանության ապահովման հարցում ձեր պատրաստակամությունը, այնուամենայնիվ, ցանկանում եմ, որ մեր իրականության պայմաններում նվազագույնի հասնեն արտակարգ իրավիճակները և բնակչության անվտանգությանը սպառնացող դեպքերը: Բարին ընդ ձեզ:

ՀՀ Արմավիրի մարզպետ՝

Համբարձում Մաթևոսյան